Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

57/4153/ 29 մարտի 2012 հինգշաբթի

ISSN 1829-2224
12045
9 771829 222003


## Ա

## Ոչ պաշտոնական «խոսնակներ»

Աշխարհում ընդունված պրակտիկա է. պետությունները, իշխանությունները, քաղաքական ուժերը իրենց ազդանշանների («մեսիջների») մի մասը տարածում են պաշտոնական հաղորդագրություններով եւ հայտարարություններով, մյուսը՝ հատուկ մարդկանց կամ կազմակերպությունների միջոցով, որոնք կարող են պաշտոնական կարգավիճակ չունենալ, բայց նրանց ասածը միանշանակ պետք է ընկալվի որպես տվյալ ուժի տեսակետ: Օրինակ՝ Միջազգային ճգնաժամային խումբը իրավաբանորեն պարզապես փորձագիտական կազմակերպություն է, բայց այդ խմբի զեկույցներում ավելի բաց եւ թափանցիկ ձեւով է արտացոլվում այն տեսակետը, որն ունի Արեւմուտքը, ենթադրենք, ղարաբաղյան հիմնահարցի վերաբերյալ: Եթե դուք ուզում եք իմանալ, թե ինչ է մտածում ռուսաստանյան իշխանությունը, լսեք ոչ թե Պուտինին կամ Մեդվեդեւին, այլ Ժիրինովսկուն, որովհետեւ առաջին երկուսը ի պաշտոնե պետք է ավելի սոլիդ եւ զուսպ երեւան, իսկ ահա Վոլֆովիչը կարող է լեզվին զոռ տալ՝ ինչքան ուզի, եւ իր խոսքում ձեւակերպումներ չընտրի: Ասենք, երբ նա հայտարարում է, որ բոլոր խոշոր գործարարները ժուլիկներ են եւ նրանց պետք է բանտ ուղարկել, դա «թարգմանաբար» նշանակում է. «Ես՝ Պուտինս, զգուշացնում եմ ձեզ՝ գործարարներիդ՝ եթե ինձ չծառայեք, կտանեմ բանտ»:

Հայաստանում էլ է նույնը: Ընդդիմությունն իր «պաշտոնական» դրսեւորումներում «չափի մեջ», կոռեկտ քաղաքական գնահատականներ է տալիս, բայց իր «սրտի խոսքն» ասում է իր լրատվամիջոցներում, կայքերում, սոցցանցերում եւ բլոգներում: Բայց տվյալ դեպքում շատ ավելի հետաքրքիր է նույն տեխնոլոգիայի դրսեւորումը իշխանական կուսակցություններում: Եթե դուք ուզում եք իմանալ, թե այս պահին ում են առաջիկա խորհրդարանական ընտրություններում իրենց մրցակից տեսնում ՀՀԿ-ն եւ ԲՀԿ-ն, լսեք, թե ինչ են ասում Արտաշես Գեղամյանը, Արմեն Աշոտյանը՝ մի կողմից եւ Հմայակ Հովհաննիսյանն ու Վահե Էնֆիաջյանը՝ մյուս կողմից: Արդյոք այդ կոալիցիոն գործընկերներն իրենց անհամաձայնությո՞ւնն են հայտնում ՀԱԿ-ի, «Ժառանգության» կամ ՀՅԴ-ի տեսակետների հետ: Ոչ, նրանք դժգոհ են իրարից, նրանք փորձում են իրար «փշացնել», «սխալ հանել»: Իհարկե, իրավիճակը կարող է փոխվել, եւ վաղը, եթե նրանք լուրջ վտանգ տեսնեն ընդդիմության կողմից, կարող են համախմբվել, եւ վերը հիշատակված գործիչները նույն ավյունով «անարգանքի սյունին են գամելու» ընդդիմադիր այն ուժին, որը, «վերեւների» գնահատականներով, լուրջ ընտրազանգված է հավաքելու, բայց հիմա նման միտումներ, հավանաբար, չեն երեւում, եւ իշխանական կուսակցությունները կենտրոնացել են իրար վրա:

Այդ ամենը նորմալ է, եւ դերակատարներն էլ են ընտրվել միանգամայն արհեստավարժ: Միայն Արմեն Աշոտյանի թեկնածությունն է այստեղ որոշակի կասկածներ հարուցում. նախարարի պաշտոնը զբաղեցնողին, այն էլ՝ կրթության, «բլիժնի բոյ» մտնելը, ինձ թվում է, հարիր չէ:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# Լավ առաջարկություն էր, բայց մի քիչ ուշացած

«Ժառանգության» առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանը մեծամասնական ընտրակարգում միասնական թեկնածուներ ունենալու համար ընդդիմությանն առաջարկ էր արել: ՀԱԿ-ը, ինչպես տեղեկացրել ենք, մերժել էր, իսկ ՀՅԴ-ից ասել էին, որ դա ժամանակավրեպ է, եւ այդ հարցը թող մնա գրանցումներից հետո: Սակայն երեկ ՀՅԴ պատգամավոր Լիլիթ Գալստյանը Aravot.am-ի հետ զրույցում ճիշտ հակառակ տեսակետը հայտնեց. «Դա ինքնին քաղաքական լավ առաջարկություն էր, բայց մի քիչ ուշացած: Կարծում եմ՝ եթե այդ առաջարկություններն ունենային մինչեւ առաջադրումները՝ ճիշտ կլիներ»: Երբ հիշեցրինք, որ Դաշնակցությունն ինքն էր հորդորել սպասել մինչեւ գրանցումները, Լիլիթ Գալստյանն ասաց, որ դա իր անձնական կարծիքն է. «Դա լավ գաղափար է, բայց պետք է ընդհականակը՝ մի քիչ շուտ լիներ, որովհետեւ լուրջ մարդիկ առաջադրվում են, մեկ էլ ասում են՝ նրան այստեղից հանիր եւ այլն: Ողջունելի առաջարկություն էր, տրամաբանական եւ շահեկան ընդդիմադիր դաշտի համար, թերեւս, կարելի էր մի քիչ ավելի շուտ անել»:



## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Ժամանակը բուժել է Բաբուխանյանի վերքերը

«Ես իմ կյանքը չեմ կապի միայն դեպքի հետ: Դրանից անցել է մոտ 10 տարի: Այսինքն՝ դեպքը, իհարկե, շատ խայտառակ պատմություն էր, բայց չեմ կարծում, որ այդ դեպքն այսօր պետք է դեր խաղա իմ հարաբերությունների առումով այս կամ այն պաշտոնյայի հետ, որն այն ժամանակ այս կամ այն պաշտոնեական դիրքն էր զբաղեցնում»,- ասաց ՀՀԿ համամասնական ցուցակի 19-րդ հորիզոնականը զբաղեցնող ՍԻՄ կուսակցության նախագահ Հայկ Բաբուխանյանը՝ պատասխանելով «Առավոտի»՝ 2003 թվականին Արտաշատում տեղի ունեցած իրադարձությունների վկայակոչմանը:

Կարդացեք էջ**D**3:

### ՀԱԿ-ի նոր հանրահավաքում Տեր-Պետրոսյանը մեսիջներ ունենալո՞ւ է

Մարտի 30-ին ՀԱԿ-ը պատրաստվում է նոր հանրահավաքի, եւ մենք երեկ ՀԱԿ անդամ Վլադիմիր Կարապետյանից հետաքրքրվեցինք, թե ի՞նչ է լինելու այնտեղ՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը պատրաստվում է նոր մեսիջնե՞ր անել, թե՞ խորտակվող եւ խորտակված նավերի հետ կապված դիտարկումներ, Վլադիմիր Կարապետյանը հարցին հարցով պատասխանեց՝ «Ձեր դուրը չե՞ն գալիս խորտակվող նավերը: Լինելու է հանրահավաք այն տրամաբանությամբ, որ նախընտրական փուլն է սկսվում»: ՀԱԿ-ի համամասնական ցուցակում ներգրավվել են նոր մարդիկ, որոնք, ըստ Վլադիմիր Կարապետյանի, հանրությանը կարող է այնքան էլ ծանոթ չեն, ուստի առաջիկա հանրահավաքին Լեւոն Տեր-Պետրոսյանը պատրաստվում է նրանց ներկայացնել ժողովրդին եւ թույլ տալ, որ նրանք ելույթներ ունենան: Վլադիմիր Կարապետյանի խոսքերով՝ «Բնականաբար, այդ նախընտրական վիճակը, նախընտրական մթնոլորտը գերիշխելու է հանրահավաքում»: Մեր հարցին՝ իշխանափոխության կոչ նորից արվելո՞ւ է, նա պատասխանեց. «Տեսնենք, էլի, դա մեր ծրագիրն է, առանց կոչի էլ մենք դրան ենք գնում»:

Կարդացեք նաեւ՝ էջ 3:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 12-ին, «Ազդակ» ակումբի հյուրն է ԱԺ պատգամավոր Համլետ Հարությունյանը:

### Եղանակ

Երեւան -4 +11, Շիրակ -15 +3, Կոտայք -15 +3, Գեղարքունիք -15 +3, Լոռի -9 +10, Տավուշ -4 +12, Արագածոտն լեռներ -15 +2, Արագածոտն նախալեռն. -5 +10, Արարատ -5 +11, Արմավիր -5 +11, Վայոց Ձոր լեռներ -15 +3, Վայոց Ձոր նախալեռն. -5 +11, Սյունիքի հովիտներ 0 +14, Սյունիքի

## Ստացված թեժ ընտրապայքարը չի կայանա

Տավուշի մարզի թիվ 40 ընտրատարածքում, ի հեճուկս 2007 թվականին տեղի ունեցած թեժ պայքարի, այս անգամ ամեն ինչ սահուն կանցնի: Ակնկալվում էր, որ դեռ 2007-ին ֆորմալ ավարտված, բայց իրականում շարունակվող ընտրապայքարն իր տրամաբանական հանգուցալուծումը կգտնի մայիսի 6-ին: Հիշեցնենք, որ 2007 թվականին այդ տարածքում մեծամասնական ընտրակարգով հիմնական մրցակիցներն էին «Գրանդ Հոլդինգի» նախագահ Հրանտ Վարդանյանի որդին՝ Միքայել Վարդանյանը, եւ «Արման Օիլ» ընկերության հիմնադիր տնօրեն, արմատներով նոյեմբերյանցի Արման Ամիրաղյանը: Թեեւ Արման Ամիրաղյանը ՀՀԿ անդամ էր, ՀՀԿ-ն պաշտոնապես սատարեց Հրանտ Վարդանյանի որդուն: Երկու կողմերն էլ այդ ժամանակ, այսպես ասած, լավ աշխատեցին՝ եւ գումարներ, եւ մթերքներ, եւ կենցաղային տեխնիկա, եւ պարարտանյութեր բաժանեցին: Վարդանյանների ընտանիքը խուճապի էր մատնված՝ «արժանի հակառակորդի» գոյության փաստից: Արդյունքում Ամիրաղյանը հաղթեց՝ ինչպես պնդում էին նրա շտաբի անդամները եւ տեղաբնակները, բայց պատգամավորական մանդատը բաժին հասավ հայտնի գործարարի որդուն, ինչը դրսեւորումն էր նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ Վարդանյան ընտանիքի հետ ունեցած սերտ կապերի: Եթե այս տարիների ընթացքում Վարդանյանները մարզում ներդրումներ արեցին, աշխատատեղեր ստեղծեցին, ըստ տեղացիների, Ամիրաղյանն էլ ետ չի մնացել, արել է իր «ձեռքից եկածը»:

Վարդանյան-Ամիրաղյան երկրորդ ռաունդը այս ընտրություններում, սակայն, տեղի չի ունենա, այն պարզ պատճառով, որ երկու թեկնածուներն էլ չառաջադրվեցին: ՀՀԿ-ն այստեղ Հրանտ Վարդանյանի որդուն փոխարինեց «Մասիս-տաբակո»-ի տնօրեն Մարինե Մարաբյանով: Բայց ականատեսները պատմում են, որ առաջադրումների մինչեւ վերջին պահը Միքայել Վարդանյանը բոլոր փաստաթղթերով պատրաստ սպասել է Ամիրաղյանի առաջադրմանը, որպեսզի իր հակաքայլը անի: Վերջին պահին միայն, երբ արդեն հաստատվել է, որ Ամիրաղյանը չի առաջադրվում, Վարդանյան ընտանիքը հաստատել է իր գործարանի տնօրենի առաջադրումը: Ասում են, Վարդանյան ընտանիքն այս անգամ էլ համաձայնության է եկել գործող նախագահի հետ, ու այդ է պատճառը, որ Արման Ամիրաղյանը չի ցանկացել դեմ դուրս գալ իր կողմից հարգելի նախագահի եւ կուսակցության որոշմանը: Նախագահի ու ՀՀԿ-ի որոշումը, ինչպես երեւում է, չի նեղացրել Ամիրաղյանին, քանի որ նա արդեն իսկ սկսել է ՀՀԿ-ի համար «ձայն բերել»: «Առավոտի» հետ հեռախոսազրույցում Ամիրաղյանը հրաժարվեց մեկնաբանություններ տալ իր չառաջադրվելու պատճառների մասին: Միքայել Վարդանյանն ընդհանրապես չպատասխանեց մեր հեռախոսազանգերին: Նախապես խոսակցություններ էին գնում, որ այս ընտրատարածքում առաջադրվելու է նաեւ հայտնի բժիշկ Արտավազդ Սահակյանը: Վերջինս նույնպես փոշմանեց:

Ն. Գ.

## Բացահայտվել է կաշառակերության դեպք

Երեկ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության եւ Ոստիկանության կողմից իրականացված համատեղ օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվել է պաշտոնատար անձի կողմից կաշառակերության դեպք: Քաղաքացի Հ.-ի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու դիմաց նրանից 500 ԱՄՆ դոլար կաշառք գումար ստանալու պահին ձերբակալվել է Երեւանի «Կենտրոն» ոստիկանության բաժնի հետաքննչական բաժանմունքի հետաքննիչ, ոստիկանության լեյտենանտ Արթուր Հովսեփյանը:

# Ոստիկանությունը թվերը նկարեց

## Հերթը ԿԸՀ-ին էլ կհասնի

Երեկ ՀՀ ոստիկանությունը հրապարակեց այս պահի դրությամբ Հայաստանում ընտրելու իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիների թիվը՝ 2 միլիոն 485 հազար 844, Երեւան քաղաքի ընտրողների թիվը՝ 860 հազար 388: Սա այն դեպքում, երբ այս տարեսկզբին Ազգային վիճակագրական ծառայության մատուցած տվյալներով՝ Հայաստանում բնակչության թիվը ներկայումս 2 միլիոն 870 հազար է: Եթե հավատանք այս երկու պետական գերատեսչությունների հրապարակած թվերին, ապա կստացվի, որ մեր երկրում ընդամենը 384 հազար 156 անչափահաս կա: Տարօրինակ վիճակագրություն է ստացվում: Ոստիկանության տվյալներն առավել տարակուսելի են վերջին տարիներին արձանագրվող՝ Հայաստանից մեկնողների եւ վերադարձողների մշտապես գրանցվող բացասական սալդոների ֆոնին, որը ստիպված էր եղել ընդունել նաեւ ՀՀ կառավարության ղեկավարը՝ վարչապետ Տիգրան Սարգսյանը՝ շարունակելով, որ արտագաղթը վտանգավոր չափերի է հասել:

Հիշեցնենք նաեւ, որ 2008-ի նախագահական ընտրությունների ժամանակ Հայաստանում ընտրողների թիվը ընդամենը 2.311.917 էր: Այս առնչությամբ ոստիկանության պաշտոնական պատճառաբանությունն այն է, թե՝ բնակչության պետռեգիստրում հաշվառվող անձանց թվաքանակն է աճել, ու այս տարվա ընտրացուցակներում ընդգրկվել են 359 հազար 614 ընտրողներ, որոնք ընդգրկված չեն եղել 2008թ. նախագահական ընտրությունների ընտրացուցակներում: Նաեւ պատճառաբանվել է, թե այս նոր «ցուցակագրվածներից» 185 հազարից ավելին 2008-ին 18 տարեկան չէին, իսկ ահա 170 հազարից ավելի՝ նախկինում հաշվառում չունեցած քաղաքացիներ հաշվառվել են բնակչության պետական ռեգիստրում՝ նպաստներ ստանալու համար:


ՖՈՏՈԼՈՒՐ

«Ժառանգություն» կուսակցության պատգամավոր Արմեն Մարտիրոսյանն այս առնչությամբ «Առավոտի» հետ զրույցում ասաց. «Այն տվյալները, որոնք բերվում են, չեն համապատասխանում իրականությանը: Հետաքրքիր է, որ պաշտոնական տվյալներով՝ արտագաղթի ծավալները մեծանում են, իսկ ահա ընտրացուցակներում ընտրողների թիվը մեծանում է: Նաեւ այդ ինչպե՞ս ստացվեց, որ 170 հազար մարդ հանկարծ որոշեց եւ հաշվառման կանգնեց: Այս ամենն անհեթեթություն է, ոչ միայն այն պատճառով, որ ստացվում է՝ 2,8 միլիոն բնակչությունից 2,5-ը ընտրողներ են, այլեւ այն, որ սոցիալական օգնությունից օգտվելու համար մարդիկ նախկինում եւս պետք է հաշվառված լինեին, ավելին՝ հաշվառված պիտի լինեին այդ օգնությունից օգտվողի նաեւ ընտանիքում ապրող բոլոր անդամները: Մի խոսքով՝ այս ամենը միանշանակ խոսում է այն մասին, որ կեղծիքների մի մեխանիզմ կա մշակված, որը կապված է լինելու ընտրողների թվաքանակի հետ, նաեւ հաշվի առնելով, որ իշխանությունները համառորեն մերժեցին ԸՕ-ում «Ժառանգություն» կուսակցության՝ քվեարկությանը մասնակցածների ցուցակներն ընտրություններից հետո հրապարակելու, ընտրական տեղամասերում քվեարկության ընթացքը պարտադիր տեսանկարահանելու վերաբերյալ մեր առաջարկները, պետք է եզրակացնել, որ իշխանությունները դրան դեմ եղան, որովհետեւ այդ դեպքում մենք շատ հանգիստ եւ արագ կարող էինք կեղծիքները բացահայտել, ֆիքսել մի քանի տեսամասերում քվեարկած անձանց»:

Նա դժվարացավ ասել, թե ընտրողների թվաքանակի այսօրինակ մանիպուլյացիայով կեղծիքի ի՞նչ մեխանիզմ կարող է գործադրվել առաջիկա ընտրությունների ժամանակ, բայց նա մի օրինակ բերեց նախորդ ընտրությունների իր փորձառությունից՝ ուրիշի փոխարեն քվեարկություններ, նաեւ կեղծ անձնագրերով քվեարկություն. «Չեմ կարող այս տարբերակը եւս բացառել, որովհետեւ նախորդ ընտրությունների ժամանակ մեր գործընկեր Լարիսա Ալավերդյանը բռնել էր կեղծ անձնագրով քվեարկության եկած մի քաղաքացու: Սկզբունքորեն ամեն ինչ էլ հնարավոր է, օրինակ՝ երբ ընդամենը մի քանի օր առաջ ես նայում էի թիվ 6 ընտրատարածքի քարտեզը՝ այնտեղ հստակ նշված էր 56 հազարից մի փոքր ավելի ընտրողների մասին, այսօր արդեն ընտրողների թիվն անցել էր 59 հազարը: Սա ուղղակի աբսուրդ է»: Ի դեպ, հիշեցնենք, որ 2008թ. նախագահական ընտրություններից հետո ընդդիմությունը՝ ի դեմս ՀՀ նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի թիմի, բազմիցս է հայտարարել, թե այդ ընտրությունների ժամանակ շրջանառվել է շուրջ 400 հազար կեղծ անձնագիր, ինչը իշխանությունները պաշտոնապես հերքում էին:

Մեր հարցին, թե՝ մասնավորապես «Ժառանգությունը» պատկերացնո՞ւմ է կամ մեխանիզմներ ունի՞ առաջիկա ընտրությունների ժամանակ այս վիճակագրական մանիպուլյացիաների հետ կապված, Արմեն Մարտիրոսյանն ասաց, թե ակնկալվող կեղծիքը կասեցնելու հնարավոր միակ ճանապարհը քաղաքական ուժերի կողմից քվեարկության ընթացքի խիստ վերահսկողությունն է՝ շեշտելով քվեարկության եկած քաղաքացիների անձնագրերի մանրակրկիտ ուսումնասիրությունը, այդ թվում՝ անձնագրի տրված եւ կոնկրետ հասցեում գրանցված լինելու ժամկետը. «Սա կարեւոր ենք համարում, որովհետեւ դա կարող է կեղծիքի որոշակի մեխանիզմների մասին վկայություններ լինել: Մի բան հստակ է՝ ընտրողների թվի ուռճացման հետ փոխկապակցված կեղծիքի ինչ-որ հստակ մեխանիզմ իշխանությունները ունեն»: Պատգամավորն այս պահին ձեռնպահ մնաց հրապարակված թվերը իրավական հարթությունում վիճարկելու հնարավորության մասին կարծիք հայտնելուց:

Ընտրողների ցուցակի առնչությամբ ՀՅԴ ԳՄ անդամ եւ կուսակցության մամուլի խոսնակ Սպարտակ Սեյրանյանն էլ մեզ հետ զրույցում առայժմ ձեռնպահ մնաց որեւէ մեկնաբանություն անելուց. «Որպեսզի մեր դիրքորոշումն ու որեւէ մեկնաբանություն հիմնավորված լինեն՝ հանձնարարել ենք կուսակցության համապատասխան ստորաբաժանումներին վերլուծել իրավիճակն ու համապատասխան եզրակացություն ներկայացնել: Դրանից հետո միայն մենք մեր տեսակետը կհայտնենք»:

Մեր հավելյալ հարցին՝ ինչի՞ հիման վրա պիտի վերլուծությունները արվեն, Սեյրանյանն ասաց, թե՝ «թվեր կան, հասանելի տվյալներ կան, որոնց հիման վրա կարելի է որոշակի եզրակացության հանգել»:

ՆԱԻՐԱ ՍԱՄԻԿՈՆՅԱՆ

# «Գյումրիում մախինացիաներ կատարելն ու ցուցակներ ուռճացնելը ի՞նչ է որ»

Երեկ Aravot.am-ը ընտրական գործընթացներում ակտիվ մասնակցություն ունեցող «Շիրակ կենտրոն» հ/կ-ի նախագահ Վահան Թումասյանին հարցրեց, թե որքանո՞վ է արժանահավատ պաշտոնական այն տեղեկատվությունը, համաձայն որի՝ Շիրակի մարզում ընտրողների թիվն ավելացել է 13 հազար 600-ով, իսկ Գյումրիում՝ 6 հազարով: Այսինքն՝ մարզում նախկին 214 հազար 722 ընտրողի փոխարեն՝ այժմ ունենք 228 հազար 325 ընտրող, իսկ Գյումրիում մոտ 119 հազարի փոխարեն՝ 125 հազար 536: Եվ սա այն դեպքում, երբ հանրապետության երկրորդ քաղաքում մարդահամարի դեռեւս պաշտոնապես չհրապարակված տվյալներով՝ 67-70 հազար մարդ է ապրում, իսկ մարզի գյուղերն օր օրի դատարկվում են, կան գյուղեր, որտեղ մի քանի տարի է՝ ձեւի համար մի երեխա չի ծնվել, անգամ տղամարդ չի մնացել: «Հավատացեք, ես ամենաշատը կերազեի, որ Գյումրին այդքան ընտրող ունենար, բայց եթե առաջնորդվենք այդ չափազանցված թվերով, ընդունենք, որ բնակչության 60 տոկոսը ընտրողներ են, մնացած 40-ն էլ անչափահասներ են, ապա իրենց ներկայացրածով կստացվի, որ Գյումրին մոտ 180 հազարանոց քաղաք է: Բայց մենք մեզ չենք խաբի, բոլորս էլ գիտենք, որ Գյումրին առավելագույնը 100 հազար բնակիչ ունի: Մեր քաղաքում 60-65 հազար ընտրողից ավելի հնարավոր չէ գտնել, թող բացականերն էլ 20-25 հազար կազմեն, բա մնացածը որտեղի՞ց ծլան»,- ասաց Վահան Թումասյանը:

Մեր զրուցակցի հավաստմամբ՝ նախորդ ընտրություններում շատ քչերն են եղել, որոնք դատական կարգով վերականգնել են իրենց ընտրելու իրավունքը, խոսքը մոտ 180-200 հոգու մասին է, այնպես որ՝ նրանք չէին կարող ընտրաքանակում այսպիսի հեղափոխություն անել: «Փաստեր չունեմ, թե էդ ավանտյուրան որտեղից են արել, բայց կասեմ, որ Գյումրին ամենաուռճացված տեղն է, այստեղ ընտրացուցակ ստուգելը, հստակեցնելը ամենաբարդն է, ու գիտե՞ք ինչու. քաղաքը թաղված է տնակային ավաններ մեջ, ընտրողը կարող է երեք անգամ ընտրություն կատարել, մի անգամ ընտրել իր փլված տան հասցեով, մյուս անգամ՝ տնակի հասցեով, երրորդ անգամն էլ՝ նորակառույց բնակարանի հասցեով, դե գնա ու ապացուցի: Ստացվեց, որ մեր ընտրողների թիվն իրոք ավելացել է, Գյումրիում նման մախինացիաները շատ հեշտ է կատարելը ու նույնքան էլ բարդ է ապացուցելը, բայց նորից եմ կրկնում՝ երանի իրենց ասածը իրականությանը համապատասխաներ ու մեր քաղաքը այսպես չդատարկվեր»,- ասաց Վահան Թումասյանը:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Առավոտ aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 29.03.2012

# ՍԻՄ-ի ճակատին գրված չէ՝ «ընդդիմություն»

## Հայկ Բաբուխանյանը՝ ՀՀԿ ընտրացուցակում ընդգրկվելու մասին




«Սահմանադրական իրավունք միություն» կուսակցության նախագահ Հայկ Բաբուխանյանից, որը զբաղեցնում է ՀՀԿ համամասնական ցուցակի 19-րդ հորիզոնականը, «Առավոտը» հետաքրքրվեց՝ ինչպե՞ս պատահեց, որ մշտապես ընդդիմադիր դիրքերից հանդես եկող ՍԻՄ-ը սկսեց համագործակցել իշխանական ՀՀԿ-ի հետ, մանավանդ, որ 2006 թվականի սեպտեմբերի 20-ի ՍԻՄ համագումարից հրապարակային ասպարեզ դուրս եկած ներկուսակցական խնդիրների ժամանակ Բաբուխանյանը ՍԻՄ նախկին նախագահ Հրանտ Խաչատրյանին մեղադրում էր իր անձնական հարցերը լուծելու համար իշխանությունների հետ համագործակցության մեջ: «Հրանտ Խաչատրյանը ունի նաեւ անձնական խնդիրներ, որոնց կապակցությամբ հանդիպել է Սերժ Սարգսյանի հետ: Եկել է ինձ մոտ՝ առաջարկելով մեղմացնել Սերժ Սարգսյանի եւ Անդրանիկ Մարգարյանի հանդեպ թերթում տարվող քաղաքականությունը: Իր կողմնակիցները պահանջում էին, որ մենք ավելի քիչ ներկայացնեինք ընդդիմության ներկայացուցիչներին, մասնավորապես Արթուր Բաղդասարյանին եւ ՕԵԿ-ի գործը, Արտաշես Գեղամյանի ելույթները: Այսինքն՝ ընդդիմության առաջատար մի շարք գործիչների փորձում էին «Իրավունքի» էջերից դուրս մղել: Ես եւ Հ. Գալաջյանը մշտապես այն կարծիքին էինք, որ կուսակցությունն ընդդիմադիր է եւ չի կարող գնալ գործարքների: Բայց հետագայում պարզվեց, որը եւ մամուլում հնչեց, որ հանդիպումները տեղի էին ունենում նաեւ այլ առիթներով»,- 2007-ի փետրվարի 9-ի համարում Հայկ Բաբուխանյանի խոսքն է ներկայացնում «Իրավունք» թերթը: Թերթի այդ օրվա համարում Բաբուխանյանի ասուլիսի ամբողջական սղագրությունն է՝ (http://www.aravot.am/2012/03/26/52493/): Պարոն Բաբուխանյանը պատասխանեց. «Նախ՝ դուք շփոթության մեջ եք: Ոչ մեկին ոչ ոք չի մեղադրել: Այն, ինչ որ դուք ասում եք այս պահի դրությամբ, երեւի տեղյակ չեք կամ շփոթված եք: Ինչ վերաբերում է մեր ներկուսակցական բանավեճերին, ապա կարծում եմ, որ դրանք այս պահի դրությամբ որեւէ ակտուալություն չունեն»: ՍԻՄ-ի որոշմամբ ՀՀԿ ցուցակում ներգրավված են նաեւ կուսակցության փոխնախագահն ու երիտթեւի ղեկավարը: Թե ինչո՞ւ ՍԻՄ-ը 20 տարուց ավելի լինելով ընդդիմադիր՝ գնաց ՀՀԿ-ի հետ դաշինքի, մեր զրուցակիցը պատասխանեց.

- Ընդդիմադիրը կամ իշխանական կուսակցությունը դա, այսպես ասած, ճակատագրական մի բան չէ, որ ճակատիդ գրված է, եւ եթե էսպիսին ես այսօր, չես կարող լինել իշխանության մեջ վաղը, եւ եթե իշխանության մեջ ես այսօր, չես կարող վաղը դառնալ ընդդիմադիր: Ամեն ինչ կախված է նրանից՝ վարվող քաղաքականությունը կամ այն քաղաքական ուժերը, ովքեր գալիս են կամ հավակնում են գալ իշխանություն, արդյոք գաղափարական ընդհանրություն ունե՞ն քեզ հետ, քո կուսակցության հետ, թե՞ ոչ:

- Ի՞նչ գաղափարական ընդհանրություններ ունեն ՀՀԿ-ն եւ ՍԻՄ-ը:

- ՍԻՄ-ը հիմնադրվել 1988-ին, ՀՀԿ-ն 1990-91 թթ.-ներին է հիմնադրվել, ձեւավորվել, գրանցվել. այդ տարիներից սկսած մեր կուսակցությունները եղել են մոտ գաղափարական հոսանքների մեջ, բազմիցս ունեցել ենք սերտ շփումներ, 1992-ին ես գլխավորել եմ ՀՀԿ-ի պաշտոնաթերթը՝ լինելով ՍԻՄ փոխնախագահ: ՍԻՄ-ի մի շարք անդամներ եղել են ՀՀԿ-ի պաշտոնաթերթի բաժնի վարիչներ, այդ թվում՝ նաեւ քաղաքական: Այսինքն՝ մեր կուսակցությունների համագործակցությունը երեւի թե Հայաստանի պատմության մեջ ամենասերտ համագործակցության օրինակներից մեկն է: Երկու կուսակցություններն հիմնվում են ազգային-պահպանողական գաղափարախոսության վրա եւ, այդ գաղափարախոսությունից ելնելով, կառուցում են իրենց աշխատանքները: Հետեւաբար, շատ բնական եմ համարում, որ ՍԻՄ-ը եւ ՀՀԿ-ն այսօր հանդես են գալիս համատեղ ցուցակով՝ ՍԻՄ-ի երեք անդամներն ընդգրկված են ՀՀԿ ցուցակում:

- ՀՀԿ-ն տարիներ շարունակ իշխանություն էր, ՍԻՄ-ը շարունակում էր մնալ ընդդիմություն: Պրակտիկ գործունեության տեսանկյունից հիմա հանրապետությունում ի՞նչն է փոխվել, որ ՍԻՄ-ը որոշեց ընդդիմադիր դաշտից քայլ կատարել իշխանական դաշտ:

- 1999-ից սկսած՝ ՀՀԿ-ն Կարեն Դեմիրճյանի գլխավորած ՀԺԿ-ի հետ միասին դարձավ ղեկավարող կուսակցություն: Այնուամենայնիվ, երկրի նախագահը ՀՀԿ անդամ չէր: Այսինքն՝ ՀՀԿ-ն այս կամ այն դաշինքի մեջ լինելով՝ կազմում էր խորհրդարանական մեծամասնություն, բայց երկրի նախագահն այդ խորհրդարանական մեծամասնությունից վեր կանգնած անձ էր եւ ղեկավարում էր կոալիցիան: Զուտ փաստերը եթե վերցնենք՝ ՀՀԿ-ն չի ունեցել իր ներկայացուցիչ երկրի նախագահ:

- Այսինքն՝ խնդիրը Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի...

- Այսինքն՝ միայն 2008 թվականից է, որ ՀՀԿ նախագահը միաժամանակ զբաղեցնում է երկրի նախագահի պաշտոնը, եւ դեռ չի եղել որեւէ ժամանակահատված, որ ՀՀԿ-ն միանձնյա կազմի խորհրդարանական մեծամասնություն: ՀՀԿ-ի դոմինանտ դերը կարող ենք տեսնել, բայց Կարեն Դեմիրճյանի ժամանակ նաեւ ԱԺ նախագահն էր այլ կուսակցության ներկայացուցիչ: Դրանից հետո բազմաթիվ տարբեր կոմբինացիաներ են եղել, բայց ստույգ եւ ճշգրիտ լինելու համար պետք է ֆիքսել, որ առաջին անգամ ՀՀԿ նախագահը դարձավ հանրապետության նախագահ 2008-ին:

- Սերժ Սարգսյանի անձով կարելի՞ է պայմանավորել ՍԻՄ-ի դիրքորոշումը:

- Ինչպես հայտնի է դասականների հումքից՝ անձը կերտում է պատմություն, ի վերջո եւ անձի դերակատարությունը պատմության մեջ, վարվող քաղաքականության մեջ հսկայական է: Այս առումով, այո, Սերժ Սարգսյանի վարած քաղաքականությունը, սկսած 2008 թվականից՝ որպես երկրի նախագահ, իր վարած նախընտրական կամպանիան 2007-ի ավարտին եւ 2008-ին, այո, մեզ ապացուցեցին, որ այն կուրսը, որը վարում է երկրի նախագահը, համահունչ է մեր պատկերացումներին: Եվ մենք այդ պատկերացումներին համահունչ՝ այսօր գնացինք այս տարբերակին եւ գտնում ենք, որ միասին աշխատելու տարբերակն օգուտ է բերելու մեր երկրին, մեր ժողովրդին:

- ՀՀԿ համամասնական ցուցակի երկրորդ հորիզոնականը զբաղեցնում է Հովիկ Աբրահամյանը, ում ժամանակին Դուք մեղադրել եք Արտաշատում Ձեր նկատմամբ կատարված մահափորձի մեջ, ինչպե՞ս եք պատկերացնում համատեղ աշխատանքը նույն թիմում:

- Ուղղակիորեն նման մեղադրանք անձամբ իմ կողմից եւ անձամբ Հովիկ Աբրահամյանի նկատմամբ չէր հնչել: Ես մեղադրեցի իշխանություններին, ընդհանուր առմամբ, ովքեր թույլ տվեցին, որպեսզի այդ դեպքը տեղի ունենա: Փաստորեն, տեղի ունեցավ դատավարություն, բացահայտվեցին մեղավորները եւ այլն, դատական վճիռ գոյություն ունի: (Պատասխանի մանրամասները՝ http://www.aravot.am/2012/03/28/53354/. Ն. Գ):

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հարցազրույցի շարունակությունը՝ վաղվա համարում:

# «Չենք կարողանում ժողովրդին համոզել»

## ՀԱԿ-ը խոստովանում է իշխանափոխության ձախողումը



«Բարեկամական խորհուրդ տամ՝ անիմաստ գաղափարների վրա իզուր ժամանակ մի վատնեք, հատկապես, որ հազիվ կարողացաք միասնական նախընտրական ցուցակ կազմել: Ամեն ինչ արեք՝ ԱԺ-ում ինչ-որ չափով ներկայացված լինելու համար եւ պատրաստվեք արդեն դասագիրք հրապարակել, թե ինչու չստացվեց ձեր՝ տարիներով հայտարարված հեղափոխությունը կամ իշխանափոխությունը: Հարգելիներս, հասարակության կարծիքի հետ հաշվի նստեք, որովհետեւ հասարակությունը բոլորովին այլ բան է ակնկալում»,- երեկ Քաղաքական եւ միջազգային հետազոտությունների կենտրոնում ՀՀԿ պատգամավոր Արտակ Զաքարյանը այսպես արձագանքեց ՀԱԿ անդամ Վլադիմիր Կարապետյանի հերթական կոչին, թե պատրաստվում են իշխանափոխություն անել, Սերժ Սարգսյանն էլ հրաժարական է տալու:

Aravot.am-ի հետ զրույցում պարոն Կարապետյանին հարցրինք՝ ինչո՞ւ եք անընդհատ խոստանում ու չեք իրականացնում այդ իշխանափոխությունը, ժողովուրդը ոտքի չի՞ կանգնում՝ Վլադիմիր Կարապետյանը անկեղծորեն պատասխանեց. «Որովհետեւ չենք կարողանում բոլորին համոզել: Միգուցե որովհետեւ դեռ մեր գաղափարները յուրաքանչյուր տուն չենք հասցրել: Կփորձենք այս ընտրարշավի ժամանակ յուրաքանչյուրին հասցնել»:

Արամ Մանուկյանը, Լեւոն Զուրաբյանը հաշվարկներ էին ներկայացնում, խոպանչիների թվերն էին հաշվում, որ փետրվարը հեղափոխության համար ամենահարմար ամիսն է, հիմա փետրվարն անցավ, մարտի վերջն է, ժողովուրդը դեռ ոտքի չի ելել: Մեր հարցին՝ նո՞ր եք եկել այն եզրակացության, որ ձեր գաղափարները յուրաքանչյուրի տուն չեն հասել՝ Վլադիմիր Կարապետյանը պատասխանեց. «Ես համաձայն եմ, որ մենք հիմնական նպատակին չենք հասել, բայց հավատացնում եմ ձեզ, որ պայքարը շարունակվում է: Մենք մեր կողմից անում ենք հնարավորը, որպեսզի հասնենք մեր նպատակին: Կարեւորը՝ քաղաքացիները, ժողովուրդը տեսնում են, որ կա պայքարող: Կա քաղաքական մի ուժ, որը գնում է իսկապես իշխանափոխության: Չի խնայում ոչ մի բան դրա համար: Այսինքն՝ այսքան զրկանքների միջով անցած, բանտերի, «Մարտի 1»-ի միջով անցած՝ կանգնած է, համախմբված է եւ իր նպատակներին չի դավաճանում»:

Մեր հարցին՝ եթե ժողովուրդը ոտքի չի կանգնում, ձեր կոչերին չի հետեւում, գուցե չի՞ ուզում իշխանափոխություն լինի՝ ՀԱԿ անդամը վստահեցրեց, որ այդպես չէ. «Հաշվի առնելով այն, որ ժողովուրդն ավելի վատ է ապրում, հուսալքված է, փոքր-ինչ արհամարհանք կա ժողովրդի նկատմամբ՝ ասելով, որ ժողովուրդը ոչինչ չի ուզում: Չէ, ժողովուրդն ուզում է, պարզապես, կարծում եմ, մենք պետք է լույսը վառենք ավելի պայծառ եւ ավելի հետեւողական լինենք մեր գործողություններում, մենք էլ անելիքներ ունենք»:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

### Սահմանափակեցին Սուքիասյանի ներկայացուցչի ելույթը

Թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը երեկ մերժեց գրանցել մեծամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորի թեկնածու Խաչատուր Սուքիասյանին:

Հանձնաժողովը հիմք ընդունեց ոստիկանության տեղեկանքը, որով կասկածի տակ էր առնվել պատգամավորի թեկնածուի՝ վերջին 5 տարում Հայաստանում մշտապես բնակվելու փաստը, իսկ Խ. Սուքիասյանի ներկայացուցիչ Արա Զոհրաբյանին 7 րոպե ժամանակ տրամադրեց որոշմանն առարկելու համար, ինչի հետ Ա. Զոհրաբյանը չհամաձայնեց՝ պնդելով, որ այդկերպ հանձնաժողովը սահմանափակում է իր ելույթի իրավունքը:

Նրա հիմնական առարկությունները երկուսն էին: Մասնավորապես, նա նշում էր, որ Խ. Սուքիասյանը օրենքով սահմանված բոլոր փաստաթղթերը ներկայացրել է ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, այդ թվում նաեւ ԿԸՀ կողմից հաստատված՝ ոստիկանության տված տեղեկանքը. «Հանձնաժողովը գտնում է, որ այդ տեղեկանքը շակերտավոր չկա, որովհետեւ ոստիկանության անձնագրային վիզաների վարչության կողմից տրվել է գրություն, որով ասվում է, որ այդ տեղեկանքում նշված տեղեկություններն այնքան էլ ճիշտ չեն: Մեր կարծիքով՝ հանձնաժողովը չէր կարող հիմնվել որեւէ այլ գրության վրա, որովհետեւ եթե հանձնաժողովը պետք է ասեր՝ չկա այդպիսի տեղեկանք, ապա պետք է վերադասի կողմից ներկայացներ որոշում, որով պետք է ասվեր, որ այդ տեղեկանքը ճանաչվում է ուժը կորցրած»:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

# Կեղծ դեղերը շուկայից չեն հավաքում

**Դեղերի շուկան ազատականացնելու՝ կառավարության որոշումից անցել է մոտ 1 տարի, սակայն դեղերի շուկայում փոփոխություններն առայժմ ի վնաս քաղաքացիների են. դեղերը չեն էժանացել, շուկան էլ լցվել է կեղծ դեղերով:**

Մոտ երկու շաբաթ է՝ հայաստանյան դեղատներում մի շարք կեղծ դեղեր են հայտնաբերվել: Հայտնի չէ, թե այդ դեղերը որտեղ են արտադրվել, ինչ սերիական համար ունեն, ով է ներկրել մեր երկիր եւ այլն: Բայց փաստ է, որ հայտնաբերելուց հետո էլ այդ դեղերը մինչ օրս ազատ վաճառվում են դեղատներում, եւ որեւէ մեկը չի խոչընդոտում դրանց սպառմանը: Կեղծ դեղերը հայտնաբերել եւ մեր երկրի անվտանգության համար պատասխանատու մարմինների դատին են հանձնել դեղարտադրության մեջ հայտնի «Նիկոմեդ» ընկերության հայաստանյան ներկայացուցչության մասնագետները: Նրանք նկատել են, որ դեղատներում վաճառվում է իրենց կողմից Հայաստան ներկրվող եւ մեր երկրում պաշտոնապես գրանցված դեղամիջոցի կրկնօրինակը՝ չնչին տարբերություններով: Կեղծ դեղերը հայտնաբերելուց հետո «Նիկոմեդ» ընկերության պատասխանատուներն անմիջապես ահազանգել են ՀՀ ազգային անվտանգության ծառայություն եւ այլ պետական մարմինների: ՀՀ Դեղարտադրողների եւ ներմուծողների միությունն էլ իր հերթին է մոնիթորինգ կատարել եւ կեղծ դեղերի վերաբերյալ իր ունեցած փաստերով դիմել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին, առողջապահության նախարարության պատասխանատուներին՝ հորդորելով միջոցներ ձեռնարկել այդ դեղերը վաճառքից հանելու: Սակայն ինչպես «Առավոտի» հետ զրույցում ասաց Դեղարտադրողների եւ ներմուծողների միության գործադիր տնօրեն Սամվել Զաքարյանը՝ որեւէ կառույց ջանք չի գործադրում «ինքնությունը» չպարզված դեղերը շրջանառությունից հանելու՝ մինչեւ որ կպարզեն, թե դա ինչպես է հայտնվել դեղատներում: Պարոն Զաքարյանի խոսքերով. «Այդ դեղերը մաքսանենգ ճանապարհով են ներկրվել Հայաստան, եւ մենք չգիտենք, թե դրանք ինչ պարունակություն ունեն՝ թո՞ւյն են, թե՞ ինչ: Պարզ չէ նաեւ, թե որտեղ են արտադրվել եւ այլն: Եվ մինչ այդ ամենը կպարզվի, պետք է դրանք վաճառքից հանել: Սակայն հարցը նրանում է, որ մենք այսօր չունենք այն մարմինը, որը կեղծ դեղերի խմբաքանակը կարող է շուկայից հավաքել: Օրինակ՝ մոտ 30 միլիոն բնակչություն ունեցող Ուզբեկստանում երբ նման փաստ է արձանագրվում, 24 ժամվա ընթացքում կեղծ դեղերի խմբաքանակը հավաքվում է, դեղերը վաճառքից հանվում են, հետո նոր միայն պարզում մնացած հարցերը»:



Սամվել Զաքարյանն այսօր դեղերի շուկայում տեղի ունեցող քաոսային իրավիճակը պայմանավորում է անցյալ տարի ՀՀ կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետություն դեղերի եւ դեղանյութերի ներմուծման ու արտահանման կարգը հաստատելու մասին» թիվ 581 որոշման մեջ կատարված փոփոխություններով եւ լրացումներով, համաձայն որոնց՝ այսուհետեւ մեր երկիր կարող են ներմուծվել միայն Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող դեղերը, ինչպես նաեւ անվտանգության, արդյունավետության եւ որակի վրա չազդող փաթեթավորման փոփոխությամբ (արդեն իսկ պետական գրանցում ստացած) դեղերը, որոնք ձեռք կբերվեն բացառապես այն անձից, այդ թվում այլ պետություն ներմուծողից, որը կտրամադրի արտադրողի կողմից իրեն տրված հավաստագրի վավերացված պատճենը:

Այսինքն՝ կարգի փոփոխությունը թույլ է տալիս անսահմանափակ քանակությամբ տարբեր երկրներից դեղեր ներկրել: Կառավարությունն իր այդ որոշումը բացատրել էր մեր քաղաքացիների համար դեղերի ֆիզիկական եւ տնտեսական մատչելիությունը ապահովելով եւ դեղերի շուկան ազատականացնելով: Սակայն դեռեւս այս նախագծի քննարկման ժամանակ դեղոլորտի մի շարք մասնագետներ փոփոխությունների վերաբերյալ խիստ բացասական կարծիք էին հայտնել՝ վարչապետին կոչ անելով զերծ մնալ այդ որոշումից: Դեղերի շուկան ազատականացնելու պարագայում մասնագետները չէին բացառում, որ կառաջանա կենսաահաբեկչության թափանցման վտանգ՝ հաշվի առնելով մեր երկրի աշխարհաքաղաքական դիրքը:

Հայաստանի դեղշուկան վտանգի ենթարկելու առաջին փորձերն արդեն արձանագրվել են. վերջերս, չգիտես ինչպես, որտեղից եւ ում միջոցով, հայկական շուկա էր թափանցել ադրբեջաներեն ներդիրով դեղորայք: Ս. Զաքարյանի խոսքերով՝ առաջին տպավորությունն այն է եղել, որ այն արտադրված է Ադրբեջանում, բայց հետո պարզվել է, որ Բելառուսում է արտադրվել՝ Ադրբեջանի համար:

«Եթե դա Ադրբեջանում արտադրված դեղ լիներ, ապա շանսը մեծ է, չէ՞, որ այն դեղատունը, որը բաց է թողել այդ խմբաքանակը, փորձեր որպես կենսաահաբեկչության կամ կենսատեխնոլոգիական զենք ուղարկել Հայաստան, եւ այն մաքսանենգ ճանապարհով կթափանցեր Հայաստան ու մեր դեղատներում ազատ կվաճառվեր: Այսինքն՝ երբ դեղը տարբեր երկրներից է ներկրվում Հայաստան, ստեղծվում է մի քաոսային վիճակ: Եվ այդ դեպքում շանսը մեծանում է կեղծ դեղեր բերելու կամ շրջանառության մեջ դնելու: Հնարավոր է՝ ուշադիր չեն եղել կամ մի դեղի անվան տակ ուրիշ փաստաթղթեր են ցույց տվել եւ այլն: Մաքսանենգությունը կատարվում է որոշակի նպաստող պայմանների դեպքում: Իսկ այդ կարգի փոփոխությամբ այդ պայմանները ստեղծվեցին»,- ասաց պարոն Զաքարյանը: Այս վտանգները հաշվի առնելով՝ Ս. Զաքարյանը 2-3 օր առաջ կրկին նամակով դիմել է ՀՀ վարչապետին: Նա հորդորում է վերանայել օրենքի փոփոխությունը եւ անցնել նախկինում գործող կարգին, ինչով առաջնորդվում է քաղաքակիրթ աշխարհը. «Նախկին կարգը լիարժեք համապատասխանում էր միջազգային չափանիշներին եւ տարիների ընթացքում ցույց է տվել իր արդյունավետ ու ճիշտ մոդելով ձեւավորված լինելը, ինչի հավաստիքն այն էր, որ Հայաստանի դեղերի շուկայում կեղծ դեղերը ցածր քանակ էին կազմում՝ 1-2,5%: Ի տարբերություն սպառողական տարբեր ապրանքների՝ դեղերն ունեն իրենց շատ խիստ կանոնակարգը: Ներմուծման, արտադրման եւ բաշխման կարգը խախտելը կբերի անվտանգության թուլացման եւ շուկան կեղծ դեղերով ողողելուն»:

Ինչ վերաբերում է վարչապետի այն պատճառաբանությանը, թե սույն փոփոխությունները միտված են դեղերի շուկայի ազատականացմանը, պարոն Զաքարյանը նկատում է. «Հայաստանում գրանցված է 178 ներմուծող կազմակերպություն եւ մեր պես փոքր երկրում, որտեղ այդքան դեղ ներկրող կա, չի կարելի ասել, որ այս դաշտում մոնոպոլիզացիա կա: Այդ թիվն արդեն իսկ խոսում է այն մասին, որ մրցակցություն կա: Դա մանրահատակ կամ ներքնազգեստ չէ, որպեսզի, ասենք՝ ինչքան շատ, ինչքան տարբեր որակի բերենք, այնքան կարող է մրցակցություն լինել եւ դրա արդյունքում գները նվազել: Դեղերն արտադրվում են կոնկրետ կազմակերպությունների կողմից, կոնկրետ ստերիլ պայմաններում, կոնկրետ ռեգիստրացիոն գործընթաց են անցնում, կոնկրետ երկրների, ավելին՝ կոնկրետ ռասայի համար: Ի դեպ, երկրների համար դեղերի գներն այդքան չեն տատանվում: Մեծաքանակ վաճառքի դեպքում մի քանի ցենտի տարբերություն կարող է լինել: Եթե մի դեղը, որը վաճառվում է $5-ով, եւ Հայաստանի համար ինքնարժեքը կարող է լինել $4, Ռուսաստանի համար՝ $3,80 կամ $3,70, այն դրանից էժան, ասենք՝ $1 հաստատ չի կարող լինել, ու եթե դու ինչ-որ մի երկրում գտնում ես շատ էժան, նշանակում է՝ ինչ-որ բան այն չէ: Առողջապահության համաշխարհային կազմակերպության ահազանգերից մեկն էլ հենց դա է, որ եթե դու առնում ես էժան դեղ, ուրեմն դա կեղծ լինելու առաջին նշանն է, եւ պետք է ուշադիր լինել, այսինքն՝ էժան դեղ հասկացողություն չկա: Կա թանկ կամ շատ թանկ, բայց ոչ էժան, ուստի այդ կարգում փոփոխությունը չէր կարող խթանել գների նվազմանը: Այսքան ժամանակ անցել է եւ ոչ մի նվազում չի գրանցվել, եթե ոչ՝ թանկացում»:

ԼՈՒՍԻՆԵ ԲՈՒԴԱՂՅԱՆ

## Կչրազրկվի



«Երեւան Ջուր» ընկերությունը տեղեկացնում է իր հաճախորդներին եւ սպառողներին, որ, վերանորոգման աշխատանքների հետ կապված, ս.թ. մարտի 29-ին, ժամը 10.00-22.00-ը, կդադարեցվի Կենտրոն վարչական շրջանի Տիգրան Մեծի պող. 12-80, Խորենացու փող. 28-160, Նար-Դոսի փող. 5-40, Գլինկայի փող. 1-13 հասցեների ու նրբանցքների, Քրիստափորի, Օստրովսկու, Բեռնակիրների, Արհեստավորների փողոցների ու նրբանցքների եւ հարակից տարածքների ջրամատակարարումը:

Ընկերությունը հայցում է սպառողների ներողամտությունը պատճառված անհանգստության համար եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար:

«Երեւան Ջուր» ՓԲԸ

# «ԱրմենՏել»՝ «Ամենագեղեցիկն իմ աչքերով» մրցույթի հաղթողները պարգեւատրվեցին

«ԱրմենՏել» ընկերությունը պարգեւատրեց Facebook սոցիալական ցանցում ընկերության Beeline Armenia պաշտոնական էջում անցկացված «Ամենագեղեցիկն իմ աչքերով» մրցույթի հաղթողներին:

Պարգեւատրման արարողությանը, որը տեղի ունեցավ «ԱրմենՏել» ընկերության Հյուսիսային պողոտայում գտնվող Beeline վաճառքի եւ սպասարկման գրասենյակում, հրավիրվել էին լավագույն աշխատանքների հեղինակները: Այն աշխատանքները, որոնք մարտի 14-ից 20-ն ընկած ժամանակահատվածում հավաքեցին ամենաշատ Like, ճանաչվեցին հաղթողներ համապատասխանաբար առաջին, երկրորդ եւ երրորդ անվանակարգերում:

Մրցույթի հաղթող՝ գյումրեցի Գեւորգ Ղազարյանը ստացել է առաջին մրցանակ՝ USB-մոդեմ եւ «Դրայվ-10» սակագնային փաթեթից մեկ տարի անվճար օգտվելու հնարավորություն: Երկրորդ տեղը գրաված երեւանցի Լիլիան Գալստյանը պարգեւատրվել է USB-մոդեմով եւ ստացել «Դրայվ-5» սակագնային փաթեթից մեկ տարի անվճար օգտվելու հնարավորություն: Երրորդ մրցանակակիր Գայանե Գալոյանը ստացավ մեկ տարի շարժական ինտերնետից օգտվելու հնարավորություն «Դրայվ-1» եւ USB-մոդեմ:



«ԱրմենՏել» ընկերության անունից շնորհավորում եմ մրցույթի հաղթողներին, ովքեր ցուցաբերեցին յուրահատուկ ստեղծագործական մոտեցում եւ վառ երեւակայություն՝ արժանանալով բազմաթիվ մարդկանց հիացմունքին ու բարձր գնահատականին: Եղեք ավելի ակտիվ, հետեւեք Beeline Armenia էջի նորություններին, քանի որ ամենահետաքրքիր անակնկալները դեռ առջեւում են»,- նշեց «ԱրմենՏել» ընկերության Հասարակայնության հետ կապերի ծառայության ղեկավար Անուշ Բեգլոյանը:

Նշենք, որ «Ամենագեղեցիկն իմ աչքերով» մրցույթը, որը նվիրված էր մայրության եւ գեղեցկության տոնին, մեկնարկել է մարտի 7-ին եւ անցկացվել է Beeline Armenia պաշտոնական էջում՝ http://www.facebook.com/beeline.am:

# «Ղարաբաղ՝ թաքնված գանձ» ֆիլմում՝ Արցախն այլ տեսանկյունից

Ռեժիսոր Զիվան Ավետիսյանը Մարիաննա Փայտյանի սցենարով նոր ֆիլմ է նկարել «Ղարաբաղ՝ թաքնված գանձ» վերնագրով, որը, ըստ հեղինակների, պատմում է ոչ թե Ղարաբաղյան հիմնահարցի մասին, այլ ներկայացնում է այսօրվա Արցախը: Ֆիլմը միտված է խթանելու զբոսաշրջությունը: Նկարում օգտագործվել են ոչ թե հանրագիտարանային նյութերը, այլ փորձառու մասնագետների դիտարկումները:

Ինչու ստեղծագործական կազմը որոշեց նման ֆիլմ նկարել: «Արցախի կառավարությանն առընթեր զբոսաշրջության վարչությունը մրցույթ էր հայտարարել, «Երկիր մեդիա» հեռուստաընկերությունը եւս մասնակցում էր դրան: Փաթեթ էինք ներկայացրել եւ սցենարական պլանով հաղթող ճանաչվեցինք մենք»,- ասում է ռեժիսորը:

Ֆիլմն իր բովանդակությամբ ինչո՞վ է տարբերվում Արցախի մասին պատմող այլ ֆիլմերից:


Ստեղծագործական կազմը՝ աշխատանքի պահին:

«Ղարաբաղի մասին ինքս էլ ունեմ մի շարք ֆիլմեր, սա արդեն 8-րդն է: Մյուս բոլորը նկարահանվել են հատուկ փառատոների համար, ցուցադրվել մեծ էկրանին, հեռուստատեսությամբ: Վերջին ֆիլմս յուրահատուկ է նրանով, որ Լեռնային Ղարաբաղը դիտարկում ենք այլ տեսանկյունից: Տուրիզմի զարգացում է հետապնդում ֆիլմը, դրա համար կարեւոր էր, որ այն լիներ համապատասխան կինեմատոգրաֆիական որակով, բովանդակությամբ ու արժեքավոր, որպեսզի Արցախը համաշխարհային զբոսաշրջության կենտրոններին հավուր պատշաճի ներկայանար»,- հավելում է մեր զրուցակիցը:

Սցենարիստ Մարիաննա Փայտյանի խոսքով. «Մեր սցենարի միջոցով 35 րոպեում դուք ոչ միայն կպտտվեք Արցախում, կփնտրեք թաքնված գանձ Ղարաբաղը, այլեւ դրանից հետո էլ ցանկություն կունենաք իրականում այցելել: Մենք 35 րոպեում ամփոփել ենք այն, ինչը, ըստ էության, բոլորին «կդրդի» տեսնել Արցախը»:

Իսկ ի՞նչ պատմական վայրեր կամ հուշարձաններ են ներկայացված «Ղարաբաղ՝ թաքնված գանձ»-ում: Սցենարիստն ասում է, որ ֆիլմում նկարահանված է այն ամենը, ինչը զբոսաշրջիկին կգայթակղի՝ գալ-տեսնել Արցախը եւ չպատմել կոնֆլիկտի մասին. «Համարյա բոլոր ներկայանալի ու հետաքրքրություն առաջացնող վայրերը նկարված են: Շեշտադրություն է արվել, օրինակ, պատմական Արցախի վանական համալիրներից մեկի՝ 1-ին դարում հիմնադրված Դադիվանքի եւ ընդհանրապես յուրօրինակ ամեն ինչի վրա»:

ԳԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# «Կյանքի խոսքի» դեմ ստորագրահավաքը վերսկսվում է



Այս տարվա մարտ ամսվա սկզբից «Միացյալ երիտասարդական լիգա» շարժումը կազմակերպել էր ստորագրահավաք՝ ընդդեմ «Կյանքի խոսք» աղանդի: Ակցիայի նպատակն էր՝ պահանջել ՀՀ կառավարությունից եւ Ազգային ժողովից «Կյանքի խոսքին» զրկել կրոնական կազմակերպության կարգավիճակից: Լիգայի համոզմամբ՝ «Կյանքի խոսքի» գործունեությունը հակասում է ՀՀ օրենքի որոշ կետերի, մասնավորապես՝ «Քաղաքացու նկատմամբ չի թույլատրվում որեւէ հարկադրանք կամ բռնություն ժամերգություններին, կրոնական ծիսակատարություններին եւ արարողություններին, կրոնի ուսուցմանը մասնակցելու կամ չմասնակցելու հարցերի նկատմամբ իր վերաբերմունքը որոշելիս»: Ինչպես «Առավոտի» հետ զրույցում նշեց «Միացյալ երիտասարդական լիգայի» ղեկավար Սեւակ Հովհաննիսյանը, արդեն հավաքվել է շուրջ 500 ստորագրություն. «Ստորագրությունները հավաքվել են ԵՊՀ-ում, Բժշկական համալսարանում, Գյուղակադեմիայում՝ հիմնականում մեր ակտիվիստների միջոցով: Հնարավոր է՝ առաջիկայում փողոցներում էլ լինեն հատուկ վայրեր, տեղի համար ներկա պահին բանակցում ենք մի շարք տարածքների ղեկավարների հետ»: Ակտիվիստները մտադիր են ստորագրությունների թիվը մինչեւ ապրիլի վերջ հասցնել գոնե 100000-ի: Երեկ տեղեկացանք, որ այս պահին ստորագրահավաքը հետաձգվել է՝ հետագայում առավել մեծ մասշտաբով անցկացնելու համար: «Սկզբում այն իմիտացիոն բնույթ էր կրում, որպեսզի երիտասարդությունն ակտիվանա եւ սկսի պայքարել աղանդների դեմ»,- ասաց Սեւակը: Նրա խոսքով, ուսանողների մի մասն անտարբեր է աղանդների հանդեպ, բայց շատերն են շահագրգռված դրանց դեմ պայքարում. «Արդեն Գյումրիից էլ կան մեզ միանալ ցանկացողներ: Այդ երիտասարդները ստորագրահավաք կանցկացնեն Գյումրու մանկավարժական համալսարանում»:

Ստորագրահավաքը վերսկսվելու է ապրիլի 2-ից եւ շարունակվելու է մինչեւ ապրիլի 30-ը: Եկեղեցիների հոգեւոր հայրերի առաջարկով՝ այն կանցկացվի բոլոր եկեղեցական թեմերում եւ մարզերում: Առաջիկայում նաեւ մեծ երթ է նախապատրաստվում: Սեւակ Հովհաննիսյանի համոզմամբ, եթե երիտասարդությունը չցանկանա պայքարել քայքայիչ աղանդների դեմ, զուտ ստորագրահավաքը ոչ մի արդյունք չի տա: Հասարակական շարժման ղեկավարը բոլորին կոչ արեց միանալ պայքարին՝ անկախ քաղաքական դիրքորոշումից:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

## Արմեն Աշոտյանի սիրտը «կպել» է կրթության ոլորտին

Երեկ «Ազատություն» ռադիոկայանի «Մաքս TV»-ի ուղիղ եթերում Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը պատասխանեց Facebook սոցիալական ցանցի օգտատերերի հարցերին:

Դրանք տարաբնույթ էին՝ սկսած կրթօջախների ջեռուցումից, վերջացրած իր պաշտոնավարման ժամկետով: ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը խոստովանեց, որ սիրտը «կպել» է կրթության համակարգին, միաձուլվել եւ շաղախվել ոլորտի խնդիրներին ու ինքն էլ պատրաստ է հետագայում ինֆորմացիայով «կիսվել», ինչպես դա ժամանակին արեց նախկին նախարար Սպարտակ Սեյրանյանը:

Պատասխանելով դպրոցների ղեկավարման իրավունքի հավաստագիր ստանալու համար կազմակերպվող քննությունների վերաբերյալ հարցին՝ նախարարը հավաստիացրեց, որ դրանք թափանցիկ էին եւ օբյեկտիվ: Օրինակ՝ վերջին փուլին 39 հավակնորդ «կտրվել» է, «կտրվողների» մեջ եղել է նաեւ իրեն ծանոթ 3 տնօրեն:

ԿԳ նախարարը փաստեց, որ Հայաստանում կան ավելի շատ մանկավարժներ, քան նրանց կարիքը կա աշխատաշուկայում, եւ ինչպես ընտրել լավագույններին, մեծ խնդիր է: Այստեղից էլ բոլոր դժգոհությունները՝ մանկավարժների կողմից:

Aravot.am-ի դիտարկմանը, թե ՀՀԿ ցուցակում կան կրթության ոլորտի ներկայացուցիչներ՝ դպրոցի տնօրեն, բուհի ռեկտոր, ԲՈՀ-ի նախագահ եւ այլն, արդյոք նրանք ոգեւորվե՞լ են, որ երիտասարդ ՀՀԿ-ական Արմեն Աշոտյանը կարող է նախարար լինել, ուրեմն մենք ինչո՞ւ այս տարիքում չփորձենք հաջողությունների հասնել, նախարարը ժպտալով պատասխանեց. «Շնորհակալություն սադրիչ հարցի համար: Այն ինքնին արժեք է, դուք ուզում էիք հնչեցնել այն, ինչն արդեն հնչեցրիք: Հանրապետական կուսակցությունը ընտրություններից հետո կառավարությունում պատրաստ է ստանձնել յուրաքանչյուր նախարարության համար համապատասխան մասնագիտական եւ կառավարչական պատասխանատվություն, որովհետեւ մեր կադրային բանկն ամենամեծն է եւ աննախադեպն է բոլոր կուսակցությունների մեջ: Չեմ ուզում վերածել կուսակցական քարոզի, ընդամենը հարցին եմ պատասխանում: Իսկ թե ով կնշանակվի կամ կվերանշանակվի այս կամ այն ոլորտի պատասխանատու, դա կտեսնենք մայիսյան ընտրություններից հետո»:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# Հետաքրքիր այցելուն

Օրերս խմբագրություն եկավ մասնագիտությամբ շինարար Գուգեն Թադեւոսյանը՝ իր հետ բերելով Լեոյի «Հայոց պատմության» երրորդ հատորը եւ իրենց տոհմածառը: Գրքի՝ հայ տպագրությանը նվիրված որոշ էջեր ընդգծված էին, դրանք մասնավորապես վերաբերում էին Ղլիջենց Ավետիսին եւ նրա եղբայր Ոսկան Երեւանցուն: Գուգեն Թադեւոսյանն ասաց, որ ինքը նրանց տոհմի շառավիղներից է, ինչը փորձեց փաստել իրենց ազգի տոհմածառով: Ինչ վերաբերում է Լեոյի հատորի ընդգծումներին, ասաց, որ դրանք արել է իր հորեղբայրը՝ մանկավարժական գիտությունների դոկտոր Պողոս Թադեւոսյանը: Գուրգեն Թադեւոսյանը հավելեց, որ նախապապերի մասին իրեն շատ է պատմել նաեւ հայրը, որը շուրջ 30 տարի դպրոցի տնօրեն է եղել:

Լեոն անդրադարձել է Մատթեոս սարկավագ Ծարեցուն, որը սկսել էր տպագրել Ներսես Շնորհալու «Հիսուս որդին», սակայն գրքի տպագրությունը չավարտած՝ հիվանդացել ու մահվան երկյուղը ներշնչել էր, որ տպարանի վիճակը տնօրինելու համար իր մոտ կանչի Ղլիջենց Ավետիսին: Վերջինս պետք է վճարեր պարտքերը եւ կիսեր ստացած շահույթը: Ըստ Լեոյի, Ավետիսն առաջարկում է տպարանը նվիրել Էջմիածնին եւ Սուրբ Սարգսի վանքին: Վերջինիս վանահայրն էլ Ավետիսի եղբայր Ոսկան Երեւանցին էր:



Ծարեցին վախճանվում է 1661-ին: Իսկ նրա սկսած հիմնարկությունը ստանում է «Տպարան Էջմիածնի եւ սուրբ Սարգսի» անունը: «Սա առաջին դեպքն էր հայերի մեջ, որ տպարանը բարեգործական նպատակով նվիրվում էր մի հիմնարկության»,- գրում է Լեոն:

Ըստ նրա, Ավետիսը գիտեր միայն վաճառականական հայերեն եւ ստիպված էր դրանով սրբագրել կիսատ թողնված «Հիսուս որդին», քանի որ հայերեն իմացող մեկ ուրիշը չկար Հոլանդիայում: Լեոն Ոսկան վարդապետին էլ համարում է ամենամեծ զոհը. «Նրա 8-ամյա կյանքը Եվրոպայում մի կատարյալ նահատակություն էր Հայաստանի լուսավորության համար: Նա առաջին հայ հրատարակիչն էր, որ գիրք տալիս էր ոչ միայն տիրացուին, այլեւ վաճառականին ու հասարակ ընթերցողին»: Իրեն անվանի լուսավորիչների տոհմի ներկայացուցիչը համարող Գուրգեն Թադեւոսյանն ափսոսում է, որ այսօր գիրքը ըստ արժանվույն գնահատված չէ Հայաստանում, սա այն դեպքում, երբ հայ ժողովուրդը տպագրության 500-ամյա ավանդույթներ ունի:

Մեր զրուցակիցը հուզմունքով պատմեց, թե ինչպես է 1992 թվականին առաջին անգամ Վենետիկ ոտք դրել բակգամոնի միջազգային առաջնության մասնակցելու շնորհիվ. «Վերջին 50 դոլարով գնացի Սուրբ Ղազարը տեսա»:

Գ. Հ.

Առավոտ daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 29.03.2012

VIVAcell MTS
ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# Ամեն մի ծանրորդ պատրաստվում է իր մեկնարկին

Այս օրերին Հայաստանի լավագույն ծանրորդները ուսումնամարզական հավաքներում են գտնվում: Նրանք նախապատրաստվում են առաջիկա պաշտոնական երեք մրցումներին:

Տղամարդկանց հավաքականի առաջատարների նպատակը օլիմպիական խաղերն են: Ըստ քաշային կարգերի՝ 2-3-րդ համարներն արդեն ապրիլի 6-ին կմեկնեն Անթալիա, որտեղ կայանալու է Եվրոպայի մեծահասակների առաջնությունը: Իսկ մեր երիտասարդների համար տարվա գլխավոր մեկնարկը կլինի ապրիլի վերջին Գվատեմալայում մեկնարկող աշխարհի երիտասարդական առաջնությունը: Թե դրանցից յուրաքանչյուրում հայաստանցի մարզիկների առջեւ ինչ խնդիրներ են դրված՝ «Առավոտը» տեղեկացավ Ֆեդերացիայի նախագահ Սամվել Խաչատրյանից:

- Որքան տեղյակ ենք, Անթալիայում Հայաստանը ներկայացված է լինելու ընդամենը չորս տղաներով: Ինչո՞վ է պայմանավորված այդքան համեստ մասնակցությունը:

- Պատճառը մեկն է ու նույնը. մեր առաջին համարները նախապատրաստվում են Լոնդոնի օլիմպիական խաղերին: Եվրոպայի առաջնության ու օլիմպիական խաղերի միջակայքում մնում է ընդամենը 120 օր: Եվ այդ ընթացքում նրանց երկու անգամ մարզավիճակի գագաթնակետին հասցնելը ցանկալի չէ: Այդ նպատակով մարզչական խորհուրդը որոշեց, որ Անթալիա մեկնեն 2-3-րդ համարները, որոնք, սակայն, նույնպես պայքարելու են բարձր տեղերի, մեդալների համար: Նրանք են՝ 69 կգ քաշայիններ Վանիկ Ավետիսյանն ու Սամվել Գրիգորյանը, 94 կգ քաշային Նորայր Վարդանյանը եւ գերծանր քաշային Հայկ Հակոբյանը: Իսկ թե ինչի համար ենք, ինչպես նշեցիք, համեստ կազմով ներկայանում, պատճառն այն է, որ Եվրոպայի առաջնությունից մոտ 20 օր հետո Գվատեմալայում մեկնարկելու է աշխարհի երիտասարդական առաջնությունը: Թե ովքեր այնտեղ կներկայացնեն մեր երկիրը, կիմանաք մի քանի օրից: Բայց այսօրվա դրությամբ ամենահավանական թեկնածուներն են 69 կգ քաշայիններ Անդրանիկ եւ Վլադիկ Կարապետյանները, Ռազմիկ Գոլթեցյանը՝ 77 կգ, եւ գերծանր քաշային Գոռ Մինասյանը: Ինչ վերաբերում է մեր մյուս ծանրորդներին, նրանց հերթն էլ կհասնի օլիմպիական խաղերից հետո կայանալիք միջազգային պաշտոնական առաջնություններում:

- Օլիմպիական մեդալը ցանկացած մարզիկի երազանքն է: Մեր ծանրորդները Պեկինում երեք բրոնզ նվաճել են: Չնայած կանխագուշակություններ անելն անշնորհակալ զբաղմունք է, հարցն էլ՝ շարշրկված, այնուամենայնիվ, Լոնդոնից ի՞նչ սպասելիքներ ունենք:

- Մենք խոստացել ենք Լոնդոնում անել ամեն բան ավելի լավ մեդալ նվաճելու համար:

- Եթե բրոնզը ամենահամեստն է, ավելի լավ ասելով նկատի ունեք արծաթն ու ոսկի՞ն:

- Այո: Մենք պատասխանատվություն ենք զգում մեր ժողովրդի, երկրի, դրոշի առջեւ եւ ուզում ենք, ի վերջո, անցնել օլիմպիական 13 ոսկիների սահմանը: Լոնդոնում բրոնզ թող էլի լինի՝ դեմ չենք, բայց ձգտելու ենք ավելին:

- Ցանկությունը լավ է: Բայց կրկին պիտի շատ հնչած հարցը տամ. դրան հասնելու համար պայմաններ ստեղծվա՞ծ են:

- Այո: Պետությունը, ՀԱՕԿ-ը եւ հատկապես Գագիկ Ծառուկյանը դրա համար անում են անհրաժեշտ ամեն բան: Լավ մարզվելու հարցում մենք խնդիրներ չունենք:

- Մեր առաջին համարները հիմա ի՞նչ մարզավիճակում են:

- Նախամրցակցական: Տիգրան Վ. Մարտիրոսյանը, Արայիկ եւ Առաքել Միրզոյանները, Ռուբեն Ալեքսանյանը, Արա Խաչատրյանը, Մելինե Դալուզյանը, Հռիփսիմե Խուրշուդյանը լիարժեք մարզումային փուլում են: Նրանք են մեր գլխավոր օլիմպիական թեկնածուները: Բայց պիտի ասեմ նաեւ՝ չի բացառվում, որ տղաների օլիմպիական թիմում փոփոխություններ էլ կատարվեն:

- Այսինքն՝ ծանրորդներ կան, որոնց հնարավորություններին կասկածո՞ւմ եք:

- Ոչ: Ընդհակառակը: Նկատի ունեի Եվրոպայի առաջնությունը, որտեղ, չեմ բացառում, մեր ծանրորդներից մեկ-երկուսն այնպիսի արդյունքներ ցույց տան, որ օլիմպիական խաղեր մեկնող մեր տղաների հավաքականում փոփոխություն կատարելու հարց առաջանա: Դա մեզ միայն կուրախացնի:

- Որքան տեղյակ եմ, օրերս Հայաստանի ծանրամարտի Ֆեդերացիան դրսից ինչ-որ հյուրեր ուներ:

- Այո: Եկել էին ՎԱԴԱ-ի ներկայացուցիչները՝ Քյոլնի լաբորատորիայից: Նրանք մեր վեց ծանրորդներից, որոնց անուններով հայտ ենք ներկայացրել օլիմպիական խաղերի կազմկոմիտե, փորձանմուշներ վերցրին ու գնացին:

- Եվ ի՞նչ:

- Ոչինչ: Նրանց բարի ճանապարհ:

- Չե՞ք անհանգստանում: Պատասխանները ե՞րբ կիմացվեն:

- Ոչ: Աստված մի արասցե, եթե ինչ-որ բան այն չլինի, ինչը բացառում եմ, 15-20 օրից կիմանանք: Իսկ եթե ոչ, ամեն ինչ կընթանա սովորական աշխատանքային հունով:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ




## ԺԱՄԱՆՑ

### Արգելվել է անորեքսիայով տառապող մոդելների գործունեությունը




Իսրայելի իշխանությունները որոշում են կայացրել գովազդային հոլովակներում եւ հագուստի ցուցադրությունների ժամանակ արգելել այն մոդելների մասնակցությունը, որոնց մարմնի կշիռը իրենց հասակի ու տարիքի համեմատ նորմայից պակաս է: Նշվում է, որ Իսպանիայում, Իտալիայում եւ Բրազիլիայում վաղուց է գործում այս օրենքը, ըստ որի՝ նկարահանման կամ միջոցառումներին մասնակցելուց առաջ յուրաքանչյուր մոդել պարտավոր է ներկայացնել բժշկի կողմից տրված փաստաթուղթ: Մոդելների անկետաներում պետք է գրված լինի, որ մարմնի կշռի հետ կապված խնդիրներ չունեն: Ընդ որում՝ 175 սմ հասակ ունեցող մոդելների քաշը չպետք է պակաս լինի 57 կգ-ից: Եթե մոդելները չեն համապատասխանում նշված չափանիշներին, ապա վերջինների հետ ոչ մի կազմակերպություն աշխատանքային պայմանագիր չի կնքում: Իսկ եթե կնքվեն գաղտնի պայմանագրեր, քրեորեն կպատժվեն տվյալ կազմակերպությունների ղեկավարները:

### Շոկոլադն օգնում է պահպանել կազմվածքը



Շոկոլադը օգնում է մարդկանց նիհարել. համոզված են Կալիֆոռնիայի համալսարանի գիտնականները: Ուսումնասիրելով մոտ 1000 ամերիկացիների սննդակարգը՝ նրանք պարզել են, որ ովքեր շատ են կերել շոկոլադ, ավելի համաչափ կազմվածք ունեն, քան այն մարդիկ, ովքեր արհամարհել են այդ քաղցրավենիքը: Արդյունքներն ապշեցրել են հետազոտողներին, որովհետեւ հայտնի է, որ շոկոլադը համարվում է բարձր կալորիականություն ունեցող մթերք: Ըստ նրանց՝ կազմվածքը գեղեցիկ դարձնելու գործընթացին օգնել է շոկոլադում առկա բիոֆլավոնիդը, ինչը կարգավորում է նյութափոխանակությունը: Հետազոտողները հավելել են՝ որպեսզի կազմվածքի վրա զգալ շոկոլադի դրական ազդեցությունը, պարտադիր չէ չարաշահել այդ քաղցրավենիքն ու այն ուտել «ձիու» չափաբաժնով: Այս հարցում կարեւորությունը տրվում է ոչ թե քանակին, այլ շոկոլադի օգտագործման հաճախականությանը. ավելի լավ է ուտել երկու կտոր, շաբաթական երեք անգամ, քան՝ ամսում երկու անգամ, բայց միանգամից մի քանի շոկոլադե սալիկ:

### «Կախարդական» ֆիլմերը զարգացնում են երեխաների երեւակայությունը



Մի՛ արգելեք երեխաներին ժամանակ առ ժամանակ դիտել «կախարդական» ֆիլմեր. խորհուրդ են տալիս բրիտանացի հոգեբանները: Նրանց ուսումնասիրությունները փաստում են, որ նման ֆիլմերը դրական են անդրադառնում երեխաների վրա: Գիտնականները հավաքել են մի խումբ երեխաների եւ ցուցադրել են արկածային, «կախարդական» ֆիլմերից կադրեր՝ հրաշագործ փայտիկի, հրաշքների աշխարհի մասին: Մեկ այլ խմբի էլ ցույց են տվել այնպիսի ֆիլմեր, որտեղ չկան կախարդական փայտիկի, հրաշագործությունների մասին կադրեր: Դիտումից հետո երեխաներին առաջարկվել է լրացնել թեստ՝ պարզելու նրանց ստեղծագործական հմտությունները: Օրինակ՝ առաջարկվել է ձեւեր մտածել, թե ինչպես կարելի է մեկանգամյա օգտագործման պլաստիկ բաժակը նետել աղբամանի մեջ եւ գտնել այլընտրանքային ճանապարհ, բաժակը կրկին օգտագործելու համար: Այն երեխաները, ովքեր հրաշագործությունների, կախարդական փայտիկի մասին պատմող ֆիլմերից կտորներ էին դիտել՝ հանձնարարությունն ակնհայտ լավ են կատարել: Մասնագետները եկել են այն եզրահանգման, որ «կախարդական» ֆիլմերի դիտումը ոչ միայն զվարճալի է, այլեւ գերազանց խթանիչ՝ երեխաների ստեղծագործական կարողությունները զարգացնելու համար:

Ե. Հ.